ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆ ԱՅՑԵԼԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

13.11.2015 15:45

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում հյուրընկալվել էր Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը:

Արդարադատության նախարարը նշել է, որ երկու կառույցների միջև համագործակցությունը խորացնելու նպատակով առաջիկայում նոր հուշագիր կստորագվի, որի արդյունքում առկա փոխգործակցությունը կմտնի որակապես նոր փուլ: Նախարարն ընդգծել է, որ փաստաբանական համայնքը Հայաստանի ամենակայացած մասնագիտական կառույցներից մեկն է: **«Փաստաբանների պալատն այսօր հայտ է ներկայացում լրջագույն դերակատարում ստանձնելու ՀՀ-ում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության երաշխավորման գործում»**,- ասել է արդարադատության նախարարը:

Արա Զոհրաբյանը ողջունել է նախարարին և կարևորել երկկողմ համագործակցությունը և հայտնել, որ Արդարադատության նախարարության հետ համագործակցությունը սկսվել է դեռևս 2005թ-ից:

Նրա խոսքով, փաստաբանության մասին օրենքը լայն հնարավորություն է տալիս փաստաբաններին զարգացնելու այս ինստիտուտը: ‘**Տարածաշրջանում լավագույն տեղում ենք գտնվում: Վերջերս էլ առիթ ունեցանք հանդիպել ԱՊՀ երկրների Փաստաբանական համայնքների ներկայացուցիչների հետ և պետք է փաստել, որ այդ երկրների Փաստաբանական համայնքները կառուցվածքային առումով մեր երկրի Փաստաբանական ինստիտուտից վերցնելու շատ բան ունեն: Մասնավորապես, այդ երկրներում չկան Փաստաբանական դպրոցներ, Հանրային պաշտպանի գրասենյակներ’**,-նշել է Արա Զոհրաբյանը:

Խոսելով փաստաբանի անկախության մասին՝ Արա Զոհրաբյանը հայտնել է Փաստաբանների պալատի զարգացման մեջ շատ կարևոր դեր ունի փաստաբանը՝ Փաստաբանների պալատի շենքը, Փաստաբանների պալատի կառավարման մարմինները որևէ բան չեն կարող անել, եթե դրսում «կռիվ տվող» փաստաբանը ինքը չկարողանա անկախ լինել և չկարողանա բարձրացնել փաստաբանի հեղինակությունը: Այդ իսկ պատճառով

ՓՊ ղեկավարի գնահատմամբ, բոլոր դրական զարգացումները «մեր փաստաբանների ձեռքբերումներն են»:

Պալատի նախագահի խոսքով Արդարադատության նախարարությունը ներկայացված է թե՛ Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի կազմում, թե՛ Փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդում:

Արա Զոհրաբյանը հայտնել է, որ նախարարություն հետ նախկինում եղել են կնճռոտ էջեր, բայց դրանք պատվով հաղթահարել ենք և երկու կառույցները շարունակում են զարգացնել համագործակցությունը:

Այնուհետև հյուրերը շրջայց են կատարել Հանրային պաշտպանի գրասենյակում ծանոթացել հանրային պաշտպանների աշխատանքային գրաֆիկին և աշխատանքային պայմաններին:

ՀՀ Փաստաբանական դպրոցում Արդարադատության նախարարը մասնակցել է Դատական նիստերի դահլիճի բացման արարողությանը և ներկա գտնվել Դպրոցի ունկնդիրների կողմից կազմակերպված դատախաղին: Նախարարը կարևորել է դատական նիստերի դահլիճի բացումն ու ընդգծել, որ դրա արդյունքում Փաստաբանական դպրոցի ունկնդիրն ուսուցման ընթացքում հնարավորություն կստանա ամբողջությամբ տիրապետելու դատական գործընթացի նրբություններին:

Դատական նիստերի դահլիճի կահավորումն իրականացվել է ֆրանսահայ բարերար Ռայմոնդ Եզեգուելյանի ֆինանսավորմամբ:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF R

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF R

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF R

PRESS SER



22 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF R



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })